



ԱՍՏՎԱԾԱԾՆՁԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 25-ից մինչև ապրիլի 2-ը Հին Կտակարանի արևելահայերեն թարգմանության աշխատանքների ընթացքին ծանոթանալու համար Մայր Աթոռ էին հրավիրվել Աստվածաշնչական Ընկերության Եվրոպական երկրների ներկայացուցիչ դոկտ. Յան Վաարդը, Աստվածաշնչական Ընկերության Մերձավոր Արևելքի ներկայացուցիչ վերապատվելի դոկտ. Մանվել Զինբաշյանը և Աստվածաշնչական Ընկերության Կենտրոնի աշխատակից Սամվել Եղնապարը:

Նրանք այդ մեկ շաբաթվա ընթացքում Աստվածաշնչի թարգմանական արվեստի վերաբերյալ գործնական խորհրդակցություններ ունեցան թարգմանիչների հետ: Նայվեցին և տեղում համեմատական ուսումնասիրության

ենթարկվեցին որոշ հատվածներ՝ թարգմանիչների անմիջական մասնակցությամբ: Մտքերի փոխանակությունը, հաճախ մեկ բառի խորագույն վերլուծությունը օգտակար դարձան՝ թարգմանիչների հետագա աշխատանքը ավելի արդյունավետ դարձնելու համար: Թարգմանությունը ավելի կատարյալ և անվրեպ տեսնելու համար՝ մշակվեցին որոշակի սկզբունքներ, որոնց /հիմնական նպատակն է հնարավոր չափով միասնականություն և ժամանակակից հնչեղություն հաղորդել նոր թարգմանությանը:

Նման հաճագործակցությունը անպայմանորեն կապահովի ցանկալի և որակյալ թարգմանություն:

